



TOPICAL DIALOGUES

«Ռեզիոն» հետազոտական կենտրոնի ծրագիրը

ՀՐԱՏԱՊ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին

N 4

2015

Սույն տեղեկագիրը պատրաստվել է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակի կողմից ֆինանսավորված «Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված կարծիքի, եզրակացության կամ առաջարկության համընկնումը ԱՄՆ կառավարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:



Մենք ինտերնետում՝

www.regioncenter.info

www.publicdialogues.info

<https://www.facebook.com/RegionCenter?fref=ts>

Հայաստանյան ԶԼՄ-ների համար օնլայն մամուլի ասուլիսների մասին

«Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգերի մասին» ծրագրի շրջանակներում, որին աջակցում է ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակը, մեր «Ռեգիոն» հետազոտական կենտրոնն անց է կացնում ինտերնետ մամուլի ասուլիսների շարք Հայաստանի լրատվամիջոցների համար: Տարբեր երկրների մասնագետներ պատասխանում են մասնակից լրատվամիջոցների հարցերին, որոնք կապված են հետխորհրդային տարածաշրջանի երկրների ինտեգրացիոն գործընթացների ու իրադարձությունների հետ:

Մամուլի ասուլիսների թեմաներն ու հարցերը կարող են ուղղակի կամ անուղղակի կապ ունենալ Հայաստանի ներկայիս ինտեգրացիոն օրակարգի հետ, բայց դրանք բոլորը ձեւավորում են գործընթացների ներկայիս պատկերը:

«Առաջին ձեռքի» այդ մեկնաբանությունները Հայաստանի լրագրողները տպագրում են իրենց լրատվամիջոցների թողարկումներում:

Տեղեկագրի այս համարում տեղ են գտել 2015 թ. ապրիլի ընթացքում կազմակերպված մամուլի ասուլիսների նյութերի հատվածները:

Օնլայն մամուլի ասուլիսներ Հայաստանյան մեդիայի համար



Եվրոպական քաղաքական հետազոտությունների կենտրոնի (CEPS, Բելգիա) ավագ գիտաշխատող ՍԹԻՎԵՆ ԲԼՈՔՄԱՆՍԻ հայաստանյան ՋԼՄ-ների համար կազմակերպված ինտերնետ մամուլի ասուլիսից

16.04. 2015

ԹԵՄԱՆԵՐԸ. «Արեւելյան գործընկերության» ծրագրի ներկայիս՝ նաև Հայաստանի հետ կապված գործընթացները; Ռուսաստանի եւ եվրոպական ինստիտուտների միջեւ հարաբերությունները.

Հայաստան-ԵՄ-ն «Արեւելյան գործընկերության» Ռիգայի գագաթաժողովի (2015թ. մայիսի 21-22) նախօրեին

- Նախագահ Ս.Սարգսյանի զարմանալի շրջադարձից հետո ԵՄ-ն ու Հայաստանը սկսեցին ասոցիացման մասին տապալված համաձայնագրի վերամշակման գործընթացը: Հիմա դժվար է կանխատեսել, թե որքանով կհաջողվի փրկել այդ համաձայնագիրը Գործընկերության եւ համագործակցության մասին հնացած համաձայնագրի փոխարեն: Ներկայումս այցազրային ռեժիմի ազատականացման եւ քաղաքականությանի բնագավառում «Հորիզոն 2020» համաձայնագրի ստորագրումը 2015 թ. մայիսի 21-22-ի Ռիգայի գագաթաժողովից Հայաստանի համար միակ սպասելի արդյունքներն են:
- Այդ երկկողմանի քաղաքական երկխոսությունը (երկխոսություն Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ – խմբ.) եւ գործողությունների ապագա պլանը հավանաբար ավելի քիչ հավակնոտ կլինեն, քան նրանք, որ վերաբերում են Ուկրաինային, Մոլդովային եւ Վրաստանին:

- Սկզբունքորեն, Հարավային Կովկասում ԵՄ ռազմավարական ու տնտեսական շահերը մնում են նույնը, անկախ Ուկրաինայում Ռուսաստանի ապակայունացնող դերակատարության պատճառով նրա հետ բանավեճից: Այնուամենայնիվ, Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի հետ հարաբերությունների հարցում ԵՄ դիրքորոշումը կարող է փոխվել տարածաշրջանում (Աբխազիայի ու Հարավային Օսիայի հետ ստոցիացման ու ինտեգրման մասին համաձայնագրեր) եւ ՍԵԼ ծովում Ռուսաստանի գործողությունների(Ռուսաստանի ջրային տարածությունների ընդլայնում) արդյունքում, կամ՝ երկրների ղեկավարների կողմից ընդունված ուրիշ որոշումների հետեւանքով (օրինակ այնպիսի որոշման, ինչպիսին Հայաստանին էր՝ ձեռք քաշել Աստղիացման համաձայնագրից):
- Մյուս կողմից՝ Ուկրաինայում ֆիասկոյից եւ «Արեւելյան գործընկերության» Վիլնյուսյան գագաթաժողովի անհաջողությունից հետո ԵՄ-ն շահագրգռված է «Արեւելյան գործընկերության» բոլոր երկրների հանդեպ իր կողմնակցության եւ Ռիգայի մայիսյան գագաթաժողովում պոզիտիվ օրակարգի վերականգնումով:

Իրանի հետ միջազգային ջերմացման հանդեպ ԵՄ-ում վերաբերմունքի մասին

- «Համատեղ համապարփակ գործողությունների ծրագիր Իրանի Իսլամական Հանրապետության միջուկային ծրագրի վերաբերյալ» (JCPOA) համաձայնագիրն այս ամսվա սկզբին առաջին քայլն էր, կատարված՝ հունիսին վերջնական համաձայնության հասնելու ճանապարհին: Մակայն այն վստահություն չի հաղորդում, թե հնարավոր կլինի հասնել վերջնական համաձայնության վեցնյակի (P5 + 1) ու Իրանի միջեւ: Եթե սառը գլուխները հաղթեն եւ գտնվի իրանյան միջուկային ծրագրի դեմ պայքարի լուծումը, ապա դա կարող է հանգեցնել քաղաքակրթությունների միջեւ հարաբերությունների կարգավորմանը. պատժամիջոցները կհանվեն, Իրանը դուրս կգա միջազգային սառեցման վիճակից, տարածաշրջանային մակարդակով կունենա քաղաքական մեծ դերակատարություն, կհաստատի նոր կոմերցիոն հարաբերություններ հարեւան եւ ԵՄ երկրների հետ: ԵՄ անդամներն առանց բացառության կողջունեն այդ գործընթացները եւ կփորձեն օգուտ քաղել դրանից:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝ <http://regioncenter.info/Internet-press-conference-with-Steven-Blockmans-rus-Interviews>



Արեւելյան եւ աֆրիկյան հետազոտությունների դպրոցին կից գործող Ժամանակակից Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի հարցերով կենտրոնի գիտաշխատող ԼՈՐԵՆՍ ԲՐՈՆԲՄԻ (Մեծ Բրիտանիա) հայաստանյան ՁԼՄ-ների համար կազմակերպված ինտերնետ մամուլի ասուլիսից

20.04. 2015

ԹԵՄԱՆ. Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ներկայիս հնարավորություններն ու պայմանները.

Ղարաբաղյան հակամարտության հետ կապված իրավիճակի վրա Իրանի շուրջ համաձայնությունների ազդեցության մասին

- Իրանի եւ Արեւմուտքի հարաբերությունների կարգավորումը դրական փաստ կլինի, բայց դրա ազդեցությունը Կովկասի վրա երկրորդական բնույթ կունենա: Տեսականորեն եւ հայերը, եւ ադրբեջանցիներն Իրանի հետ ընդհանուր շատ բան ունեն, եւ Ռուսաստանի ու Թուրքիայի համեմատ Իրանի ընկալումները գաղափարական ավելի քիչ կապեր ունեն Հարավային Կովկասում: Միեւնույն ժամանակ տարածաշրջանում Իրանի մարզինալ դերակատարությունն այսօր պայմանավորված է կայսրության դարաշրջանից ժառանգված բարդություններով, նաեւ՝ կրոնական պետությանը բնորոշ տարբեր գործառույթներով:

Մասնավորապես, Իրանն ու Ադրբեջանը բարդ ժառանգություն ունեն, ինչը կողմերից յուրաքանչյուրին ստիպում է կասկածանքով վերաբերվել ընդհանուր սահմանից այն կողմ գտնվողին: Վերջին բանը, որ պետք է Հարավային Կովկասին, տարածաշրջանային ուժերից կազմված հակառակորդների էլի մի խումբ ձեռքբերելն է: Այնպես որ, հուսով եմ, որ տեղի կունենա Իրանի պրագմատիկ եւ աստիճանական ներգրավում քաղաքական բնագավառներում: Մա ընդհանուր առմամբ Հարավային Կովկասում կարող է նվազեցնել աշխարհաքաղաքական մեկուսացման զգացողությունը եւ ունենալ առաջնային դրական ազդեցություն Լեոնային Ղարաբաղի հակամարտության վրա:

Ղարաբաղյան կարգավորման վրա Ադրբեջանում բռնաճնշումների ազդեցության մասին

- Այո, Ադրբեջանում պետության եւ հասարակության միջեւ հարաբերությունների վատթարացումը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում էր: Վերջին 12 ամիսների ընթացքում դա ռեալ ու էական փոփոխություն դարձավ: Մենք դեռ հեռու ենք դրա բոլոր տեսակի ազդեցությունները հասկանալուց: Այս համատեքստում խաղաղության եւ հակամարտության փոխակերպման հարցերով հետագա բանակցությունների համար ավելի ու ավելի քիչ մասնակիցներ են մնում, որոնք չեն տեղավորվում Ադրբեջանի պետական դիրքորոշման շրջանակների մեջ: Ադրբեջան պետության ուժերը խաղաղարար պարտականությունների կատարման տեսանկյունից նույնպես, ցավոք, թուլացել են: Բայց ես կարծում եմ, որ կառավարման խնդիրը նույնպես պետք է ավելի լայն տեսանկյունից դիտարկել:
- Վերջին 20 տարիների ընթացքում տեղի ունեցավ առաջատար ժողովրդավարական ազդակների նոսրացում ու թուլացում այս հակամարտության մեջ ներգրավված բոլոր հասարակություններում: Եվ հակամարտությունը առանցքային դեր ունեցավ այդ գործընթացում. գլխավորապես հակամարտության պատճառով ոչ ոք չի կարող հիմնավորել, թե ինչու չեն կարող իրականացվել բարեփոխումները: Հակամարտությունը արդարացնում է պետությունների ռազմականացումը, վերնախավերի կայունությունը եւ զարգացման բացակայությունը: Սա հեզմանք է, քանի որ Ղարաբաղյան շարժումն ի սկզբանե ուղղված էր փոփոխությունների եւ բարեփոխումների իրականացմանը:
- Քաղաքացիական հասարակության «անջատումը» երկու հիմնական վտանգ է առաջացնում, որոնք մեզ վերադարձնում են դեպի Ղարաբաղյան հակամարտությունը: Նախ՝ Ադրբեջանում շատ քիչ են հասարակական անկախ դերակատարները, որոնք կարող են ընկալվել որպես իրենց հայ գործընկերների հետ շփումների ու երկխոսության լեգիտիմ գործընկերներ: Փոխգործակցության լայն սպեկտրը նեղացվեց մինչեւ պետության կողմից ուղղորդվող մի գործընթաց, որտեղ նույնիսկ խաղաղարար գործընթացը ուղղակիորեն կապվում է պետդեկավարության հետ նույնականացման ու նրա իրավահաջորդը լինելու հետ: Երկրորդ՝ որ լիբերալ-սահմանադրական եղանակներով դիմադրության ակտիվների փակումը կհանգեցնի այլ ձևերի ակտիվացմանը: Եվ մենք դեռ բախվելու ենք սրա հետ: Ամեն դեպքում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում սեփական հասարակության մեջ դաշնակիցներ ու գործընկերներ գտնելու ադրբեջանական պետության ներուժը պատրանքային է մնում:

«Նավթային գործոնի» ու Ղարաբաղյան գործընթացում Մեծ Բրիտանիայի մասնակցության մասին

- Նախեւառաջ, չլինելով Մինսկի խմբի մշտական անդամ, Մեծ Բրիտանիան Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում կարելու

դերակատարություն չունի: Սկսած 2003 թվականից խաղաղարար գործընթացում Մեծ Բրիտանիայի հիմնական ներդրումն իրականացվել է հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ աշխատող քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները սատարելու միջոցով:

- Բայց «նավթային գործուն», իհարկե, ունեցավ հսկայական եւ ոչ միանշանակ դեր: Ես այն երկու մասի կբաժանեի. դա նրա կարելությունն է Ադրբեջանի պետականաշինության մեջ, եւ՝ նրա նշանակությունը լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսման նկատմամբ տարբեր սուբյեկտների վերաբերմունքի ձեւավորման հարցում: Նավթը ծայրահեղ կարելու պետականաշինական գործիքի դեր խաղաց 1990 թթ. կեսերին, ինչի շնորհիվ վերականգնվեց ադրբեջանական քարուքանդ վիճակում գտնվող պետությունը: «Դարի պայմանագիրը» միջազգայնացրեց կրիտիկական պահին ադրբեջանական պետականության գաղափարն ու լեզվատիրությունը: Այդ ժամանակվանից եկամուտները հնարավորություն տվեցին համախմբել գործող վերնախավին, վերազինվել եւ իրականացնել որոշ վերամշակումներ, որոնք Ադրբեջանում ինքնավստահության նոր զգացողություն հաղորդեցին: Այս տեսանկյունից նավթը կարող է դիտարկվել որպես Ադրբեջանի կողմից ստատուս – քվոն չընդունելու գլխավոր գործոն:
- Բայց այն պահից, երբ 1990 թթ. կեսերին նավթարդյունաբերությունը հնարավորություն տվեց միջազգայնացման միջոցով ամրապնդել ադրբեջանական պետականությունը, միաժամանակ միջազգայնացվեց նաեւ կոնսենսուսը կայունության պահպանման եւ նավթարդյունաբերությանը սպառնացող ռազմական գործողությունների վերսկսումը թույլ չտալու հարցում: Այս իմաստով նավթը ստատուս-քվոյի անքակտելի մասն է, որը թուլացնում է նոր պատերազմի գրգռիչները: Բայց ընդհանուր առմամբ ուզում եմ ընդգծել, որ նավթը տարածքների ու անվտանգության հետ կապված գլխավոր խնդիրը չէ: Ի վերջո նավթը կվերջանա, բայց Ղարաբաղյան հակամարտությունը կմնա:

Ռուսաստանի զենքի քաղաքականությունը Հայաստանի եւ Ադրբեջանի հետ հարաբերություններում

- Նախ՝ այստեղ գործում են պարզ շուկայական ուժեր: Ռուսաստանը զենք ունի, որը ենթակա է վաճառքի, իսկ Ադրբեջանն ունի փող զենք գնելու համար: Երկրորդ՝ քանի դեռ Հայաստանն ու Ադրբեջանը չեն հատել Ռուսաստանի գաղափարախոսական կարմիր գիծը, կապված նրանց եվրատլանտյան ինտեգրման հետ, ռացիոնալ է. 1)պահպանել Հայաստանի ու Ադրբեջանի վրա ռազմավարական ազդեցությունը, ինչին էլ ծառայում է նրանց միջեւ սպառազինությունների մրցավազքը, 2) օգտվել կողմերից յուրաքանչյուրի կոմերցիոն հնարավորություններից՝ նրանց զենք մատակարարելու միջոցով, 3) ստանալ խորհրդանշական օգուտներ՝ միջազգային հարթակում միաժամանակ կատարելով միջնորդի դեր: Ռուսաստանի տեսանկյունից նման իրավիճակը եռակի շահավետ է, եւ այս առումով կարծում եմ,

որ Ղարաբաղյան հակամատությունն արդյունավետ է Հայաստանին ու Ադրբեջանին իրենց նախկին մետրոպոլիսի վերահսկողության տակ պահելու հարցում:

Հակամարտության շփման գծում բախումների ինտենսիվացման մասին

- Բախումների ու միջադեպերի ինտենսիվության եւ բազմազանության աճը կարող է տարբեր բացատրություններ ունենալ: Հարկ է նշել, որ այս մասին սկսեցին էապես ավելի շատ հաղորդել, քան առաջ էր, չնայած հրադադարի խախտումներ տեղի են ունեցել միշտ: Այս կարգի հաղորդագրությունները առանցքային տեղ են գրավում հաշվետվություններում, այնպես որ ես դեռեւս չեմ պնդում, թե բախումների ինտենսիվության աճ չկա, այստեղ զգացվում է ինչպես տեղեկատվական, այնպես էլ ռազմական մարտավարությունը:

Երկրորդ՝ շփման գծում միջադեպերը կարող են լինել վերազինման նախադրյալ: Ներուժի գործնական ցուցադրումը ինտենսիվ վերազինման պայմաններում հարկ է դիտարկել որպես քայլ, որն ուղղված է հավասարակշռելու հասարակական սպասելիքները՝ թե ռազմական ներդրումներն իրենց կարդարացնեն: Երրորդ՝ գորքերի շփման գիծը կարելու ազդեցություն է գործում ներքին քաղաքականության վրա: Եւ դա նույնպես կարող է դիտարկվել որպես տարածաշրջանային լայն իրադարձություններին արձագանքման մի տարր: Իրադարձություններ, որոնց արդյունքում տապալվեցին թվում էր թե կայուն կառավարություններ: Հակամարտության հետ կապված կորուստներն ու սպառնալիքների բարձր մակարդակը շեղում են ուշադրությունը քաղաքական լճացումից, կառավարման ու սոցիալական արդարության հետ կապված խնդիրներից, կարող են ստիպել լռել ցանկացած ընդդիմությանը:

- Կողմերից յուրաքանչյուրն ունի նաեւ իր սեփական դրդապատճառները: Ադրբեջանի՝ որպես ստատուս-քվոն չընդունողի համար, դրանք են՝ հիասթափությունը, ՊՆ-ի ղեկավարության փոփոխությունը եւ այն զգացողությունը, թե շփման գծի միջադեպերն ու դրանց միջազգային հրապարակայնացումը կարող են բանակցային գործընթացում փոխել ուժերի հարաբերակցությունը հոգուտ Ադրբեջանի: Հայկական կողմի/կողմերի, որպես ստատուս –քվոյի կողմնակցի համար, դա ադրբեջանական նկրտումներին արձագանքելու եւ ստատուս-քվոն պահելու հարցում սեփական կարողությունը դրսևորելու միջոց է: Գործնականում դա հանգեցնում է շփման գծում ռազմական գործողություններին, նպաստում է միջադեպերի ավելացմանը, ինչպես դա եղավ 2013թ. նոյեմբերին, երբ ադրբեջանական կողմը ոչնչացրեց հայկական ուղղաթիռը: Բոլոր կողմերը ներքաշված են պատասխան գործողությունների չընդհատվող շղթայի մեջ, որը վերահսկելը դժվար է:
- Կարծում եմ, որ պատերազմի կանխարգելումն առաջնահերթ է դարձել, եւ այստեղ դեռ շատ բան կարելի է անել: Կա ինչպես հրադադարի ավելի վստահելի մեխանիզմի, այնպես էլ դրա խախտման համար ռեալ պատասխանատվության անհրաժեշտություն: Հրադադարի մոնիտորինգի ԵԱՀԿ մանդատը մշակվել է

բոլորովին այլ դարաշրջանում, 20 տարուց էլ առաջ, երբ հայերն ու ադրբեջանցիները ավերված ու սպառված էին պատերազմից, եւ երբ պետք էր հնարավորինս արագ հասնել խաղաղ կարգավորմանը: Այսօր իրավիճակն էապես ուրիշ է, կան երկու լիարժեքորեն զինված բանակներ, որոնք դեմ առ դեմ բախվում են լարված ու ագրեսիվ մթնոլորտի պայմաններում: Հետեւաբար՝ ԵԱՀԿ մանդատն ունի շտապ սրբագրման կարիք, բայց դա դժվար է անել առանց հակամարտության բոլոր կողմերի համաձայնության:

Մեծ Բրիտանիայի կողմից 1915 թ Հայերի ցեղասպանության չճանաչման մասին

- Բհարկե, եւ չեմ կարող խոսել բրիտանական կառավարության անունից՝ նրա քաղաքականության եւ առաջնահերթությունների մասին: Վերջին տարիներին ցեղասպանության ճանաչումը Մեծ Բրիտանիայում կարելուք ներքին հարց չի եղել, չնայած՝ կապված 100-ամյա տարելիցի հետ հասարակական հետաքրքրությունն ու իրազեկվածությունը բարձրացան: Հասկանալի է, որ Կովկասի այլ վայրերում եւ տարածաշրջանում բրիտանական հարաբերությունները խնդիրներ են ստեղծում ճանաչման համար: Բայց եւ կուզեի նաեւ հարցնել՝ իսկ Հայաստանի համար որն է ցեղասպանության ճանաչման քաղաքական արժեքը: Միացյալ Նահանգները չեն ճանաչում Ցեղասպանությունը, թեւ բազմաթիվ նահագներ արել են դա, բայց Հայաստանի հետ ունեն լավ հարաբերություններ եւ երկրին էական տեխնիկական օգնություն են ցուցաբերում: Ռուսաստանը ճանաչում է Ցեղասպանությունը, բայց ըստ ընդհանուր համոզման, ունի բարդ հարաբերություններ Հայաստանի հետ, ինչն անհանգստության առիթ է բազմաթիվ հայերի համար: Արդյոք Ցեղասպանության ճանաչումը հիմնական չափանիշն է, որով Հայաստանը պետք է գնահատի իր բարեկամներին ու թշնամիներին: Կարելուք ոչ թե Բրիտանիայի, այլ Թուրքիայի ճանաչումն է: Ինձ թվում է, որ այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է համբերատար մոտեցում, եւ ինչպես բոլորն են կարծում՝ թուրքական հասարակության հետ երկարատեւ աշխատանք: Ճանաչումը հնարավոր կդառնա, երբ դա կպահանջի թուրքական հասարակությունը: Չնայած միջազգային աջակցությունն անհրաժեշտ է, բայց չափազանց մեծ ճնշումը թուրք քաղաքական գործիչների համար պատրվակ է պնդելու, թե ցեղասպանության ճանաչումը խոշոր տերությունների կողմից Թուրքիայի նկատմամբ հարձակման ձեւ է: Բացի այդ, եւ կասեի, որ բրիտանական գիտական շրջանակները վավերացրել են Թուրքիայի հայերի ոչնչացման գործընթացն ու քաղաքականությունը: Էդինբուրգի համալսարանի պրոֆեսոր Դոնալդ Բլոքհամը (Donald Bloxham) ցեղասպանության հարցերով համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականներից է, եւ նա շատ է գրել Հայերի ցեղասպանության մասին: Դոկտոր Ջոան Լեյկոկը (Joanne Laycock) Շեֆիլդի համալսարանից նույնպես Բրիտանիայում հայագիտության առաջատարներից է, եւ նա ամենայն խորությամբ է ներկայացնում Հայերի ցեղասպանությունն իր դասավանդման ընթացքում: Մեծ Բրիտանիայում գիտական

մակարդակում Հայերի ցեղասպանությունը լայնորեն ճանաչվում է որպես պատմական փաստ:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝ <http://regioncenter.info/Internet-press-conference-with-Laurence-Broers-rus-Interviews#>



Ատլանտյան խորհուրդ (Atlantic Council) միջազգային կազմակերպության ավագ գիտաշխատող ՄԱԲԻՆ ՏՐԵՅՁԵՐԻ հայաստանյան ՋԼՄ-ների համար կազմակերպված ինտերնետ մամուլի ասուլիսից

30.04.2015

ԹԵՄԱՆ. Հարավային Կովկասում անվտանգության խնդիրները ինտեգրացիոն նոր գործընթացների համատեքստում.

Ղարաբաղյան գործընթացի վրա Ուկրաինական եւ Ղրիմյան իրավիճակի ազդեցության մասին

- Վերջին 18 ամիսների ընթացքում աշխարհաքաղաքական տեսանկյունից անվտանգությունը լրջորեն խարխիլվեց եվրոպական լայն տարածքներում: Անվտանգության իրավիճակի հետագա վատթարացման հնարավորությունը մեծանում է, քանի որ 2013-2015թթ. զինված բախումները հաճախակի են դարձել, նախկինի համեմատ դրանք ընթանում են ավելի մեծ տարածքներում, որոնց թվում են նաև Լեռնային Ղարաբաղից հեռու գտնվող հայ-ադրբեջանական սահմանի հատվածները, զինվորների ու քաղաքացիական բնակչության շրջանում զոհերի քանակը նույնպես աճել է: Ավելի լուրջ զենքեր են կիրառվում, իրականացվում են ավելի սադրիչ ներթափացումներ դեպի հակառակորդի տարածքներ: Քանի որ հայկական ու ադրբեջանական պաշտպանական ուժերի ադրբայրներն իրարամերժ տվյալներ են հաղորդում զոհերի քանակի մասին, իսկ ԵԱՀԿ Մոնիտորինգի խումբը կազմված է 6 դաշտային դիտարկողներից, ծայրահեղ դժվար է զոհերի ճշգրիտ թվի որոշումը: Երկու երկրներում շարունակում են աճել ռազմական բյուջեները, խստացվում է ռազմական հռետորաբանությունը: Հայաստանի ու Ադրբեջանի պաշտպանության նախարարությունների միջև արդեն չի գործում ուղիղ կապը, իսկ Բաքուն, քանի դեռ Հայաստանը լուրջ տրամադրվածություն չի ցուցաբերում

օկուպացված տարածքներից իր գորքերի դուրսբերման հարցում, ընդդիմանում է անվտանգության ապահովման այնպիսի միջոցներին, ինչպիսին, ասենք, թեժ գծի վերականգնումն է, մոնիտորինգային կանխարգելիչ մեխանիզմի ստեղծումն է (ինչպիսին Հարավային Օսիայում կա), կամ՝ դիպուկահարների ետքաշումը: Բայց ամենամեծ խնդիրն այն է, որ այս պահի դրությամբ կողմերի միջեւ վստահության մակարդակն ամենացածր կետում է սկսած 1994 թ-ից: Հիմնարար սկզբունքները, որոնց շուրջ կողմերը բանակցում են 2004-2005թթ. ի վեր, տապալված են Ուկրաինայում եւ Ղրիմում ստեղծված իրավիճակների պատճառով:

- Այո, ես կարծում եմ, որ Ուկրաինական իրավիճակը եւ հատկապես Ռուսաստանի կողմից Ղրիմի անեքսիան բարդացրել են Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը:
- 2004-2005 թթ. ի վեր քննարկվող Հիմնարար սկզբունքների համաձայն կարգավորումը պետք է հենված լինի երեք տարրերի վրա՝ ուժի չկիրառում, տարածքային ամբողջականությունն եւ ինքնորոշման իրավունք: Բոլոր այդ էլեմենտները տարբեր աստիճանի խարխլվել են Ղրիմում: Հայկական կողմի համար ամենագլխավորն այն է, որ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի հարցով համաժողովրդական քվեարկությունը /հանրաքվեն եւ գորքերի ետքաշման համար անվտանգության միջազգային ամուր երաշխիքները պետք է դառնային Հիմնարար սկզբունքների շուրջ պայմանավորվածությունների մասը: Բուդապեշտյան հռչակագիրը խախտված է, Ղրիմում անց է կացվել այնպիսի հանրաքվե, որը չի համապատասխանում այս հարցով Կիևյան պայմանավորվածություններին: Ու հիմա , արդեն հասկանալի չէ, թե ինչպիսին պետք է լինեն անվտանգության երաշխիքների ու հանրաքվեի՝ որպես կարգավիճակի հարցի լուծման միջոցի, շուրջ պայմանավորվածությունները:

«Արեւելյան գործընկերության» երկրներում անվտանգության հետ կապված իրավիճակի մասին

- Ամենակարեւորն այն է, որ խախտվել է Ռուսաստանի, ԱՄՆ-ի ու ԵՄ-ի միջեւ վստահությունը: Այս երեք կողմերը կարծես այլեւս դադարել են միանման մեկնաբանել միջազգային իրավունքն ու ԵԱՀԿ Եզրափակիչ ակտը: Հուսանք, որ բոլոր կողմերը հավատարիմ կմնան Մինսկ-2 -ի շրջանակներում ստանձնած իրենց պարտականություններին, որ հնարավոր կլինի խաղաղություն հաստատել Ուկրաինայի արեւելքում, ձեւավորել անհրաժեշտ քաղաքական ու տնտեսական միջավայր կյանքի նորմալ ռիթմի վերականգման համար: Ցավոք, այս օրերին Մարիուպոլում մենք ականատեսն ենք ծանր զինատեսակի վերագործարկման,

մեծաթիվ տեղեկատվություն է հասնում այն մասին, որ Ռուսաստանն իր ուժերն է կենտրոնացնում Ուկրաինայի հետ սահմանին, հետեւաբար՝ անհասկանալի է, թե ինչ կլինի մոտ ապագայում: Նման աշխարհաքաղաքական պայմաններում մեծապես բարդացել է Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը, բայց ես չեմ կարծում, որ ԱՄՆ-ն, Ռուսաստանը կամ ԵՄ-ն, քանի դեռ նրանց ջանքերն ուղղված են Ուկրաինայի կողմը, շահագրգռված են Ղարաբաղյան հակամարտության ստատուս-քվոյի խախտմամբ:

- Ակնհայտորեն ամենաանհասկանալի իրավիճակ մենք տեսնում ենք Մոլդովայում, որտեղ ԵՄ-ն ու ԵԱՏՄ-ն ստանում են հասարակական համաչափ աջակցություն: Մերձդնեստրն ավելի ու ավելի է մեկուսանում, իսկ Գագաուզիայի բնակչության վրա ավելի է աճում ռուսամետ խմբերի ազդեցությունը: Թեև ես չեմ ուզում ասել, որ հետխորհրդային տարածքների հակամարտությունների գոտիներում կա իրավիճակի սրացման եւ ռազմական բախումների վտանգ, բայց պարզ է, որ Ռուսաստանի ու ԵՄ/ԱՄՆ-ի միջեւ աշխարհաքաղաքական հակամարտությունն ավելի սուր արտահայտվում է Մոլդովայում/Մերձդնեստրում, քան որեւէ այլ վայրում: Ինչպես արդեն նշել եմ, իրավիճակը վտանգավոր է նաեւ Լեոնային Ղարաբաղում եւ նրա շուրջը: Բայց իմ կարծիքով՝ այս վերջին հանգամանքի պատճառը պետք է փնտրել տեղական /տարածաշրջանային գործոններում, այլ ոչ քեւ աշխարհաքաղաքական համատեքստում:
- ԱՄՆ/ԵՄ-ն պետք է շարունակեն երկխոսությունը Հայաստանի հետ, եւ նրան լիովին հաշվից չհանեն իբրեւ ռուսաստանյան ծայրամասի: Օրինակ՝ դրական է այն, որ շարունակվում են Բրյուսելի ու Երեւանի միջեւ բանակցությունները Աստղիացման համաձայնագրին փոխարիինող փաստաթուղթ ստորագրելու համար: ԵՄ-ն պետք է շարունակի աջակցել Հայաստանին կայուն ինստիտուտներ կառուցելու գործում, որոնք հիմնված են օրենքի գերակայության եւ տեղացի քաղաքացիների պատասխանատվության վրա: Միեւնույն ժամանակ ԵՄ-ն պետք է իր պայմաններն ավելի հստակ դարձնի, եւ այնտեղ, որտեղ կտեսնի Հայաստանի «կեղծված բարեփոխումները», չպետք է խուսափի բաց քննադատական հայտարարություններից: Համենայնդեպս, Հայաստանի համար Ռուսաստանից անկախ որոշումների որոշակի տարածություն ունենալու լավագույն միջոցը պատվարժան եւ լեգիտիմ տեղական ինստիտուտների ապահովումն է:

Ղարաբաղյան կարգավորումը նոր պայմաններում

- Տարեցտարի ավելի ու ավելի է դժվարանում Լեոնային Ղարաբաղի ստատուս-քվոյի պահպանումը, քանի որ կողմերն ավելի շատ են ընդդիմանում փոխզիջման

հնարավորությանը, հասարակություններն ավելի քիչ ընկալունակ են խաղաղ գոյակցության հարցի նկատմամբ, ռազմական զինանոցներն ավելի են ընդլայնվում, իսկ առաջնագիծը թիզ առ թիզ ավելի է մոտենում: Այս ամենը մեծացնում է հանկարծահաս պատերազմի հավանականությունը:

- Այդ պատճառով հատկապես Ռուսաստանի եւ ԱՄՆ/ԵՄ-ի միջեւ հարաբերությունների բարելավման դեպքում , հնարավոր է, որ Մոսկվան թույլ կտա ընդլայնել հակամարտության կարգավորման հարցով քննարկումներն՝ ավելի շատ փորձագետների ներգրավմամբ եւ տեխնիկական խնդիրների լուծման համար բանակցությունների խորացմամբ: Ինչպես արդեն խորհուրդ եմ տվել, կարծում եմ, որ այսօր սա առաջ գնալու լավագույն ճանապարհն է:
- Ռուսաստանն ու Թուրքիան իսկապես ամրացնում են իրենց քաղաքական եւ տնտեսական կապերը, նույնիսկ այնպիսի արտաքին քաղաքական հարցերում նրանց միջեւ սկզբունքային անհամաձայնությունների ֆոնին, ինչպիսին, ասենք, Սիրիան է: Հիմա Թուրքիան ԵԱՀԿ ՄԽ-ում պաշտոնական դերակատարություն չունի, եւ ես չեմ կարծում, որ Ռուսաստանը Թուրքիային իսկապես լուրջ դերակատար է համարում Հարավային Կովկասի հակամարտությունների լուծման հարցում:
- Մինչ այսօր Հարավային Կովկասում իրավիճակի կարգավորման իր փորձերը (ինչպես օրինակ՝ Աբխազիային դեպի ծով ելք ունենալու հարցում աջակցելու ժամանակ էր) Թուրքիան հակված էր ձեռնարկել առանց լայն հանրայնացման: Մենք կարող ենք վերցնել նաեւ Ղրիմի օրինակը, որտեղ Թուրքիան բնական դաշնակիցներ ունի ի դեմս այնտեղի թաթարների: Նրանց իրավունքների պաշտպանության հարցում իր անհանգստությունն արտահայտելիս Անկարան կիրառում է Ռուսաստանի հետ լուր ղիվանագիտության եղանակը: Թեեւ Թուրքիան հստակ շահեր ունի Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հարցում, կասկածում եմ, թե որեւէ փոփոխության հասնելու համար Ռուսաստանը շատ է հետաքրքրված Թուրքիայի հետ համագործակցությամբ այս հարցում: Կարող եմ պատկերացնել, որ միայն լուրջ բախումների վերսկսման դեպքում Անկարան ու Մոսկվան կմիավորվեն այնպիսի մի պատերազմում չներքաշվելու համար, որի ժամանակ նրանք հայտնվելու են հակադիր կողմերում:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝ <http://regioncenter.info/Internet-press-conference-of-Sabine-Freizer-rus-Interviews>